Գյուղապետարանի ծառայողական մարդատար մեքենայի շահագործման համար գազի օրական ծախս սահմանել 7 / յոթ/ խմ, իսկ բենզինի օրական ծախս՝ 8/ութ/ լիտր, ՈՒԱԶ մակնիշի ավտոբենայի համար օրական 3/ երեք/ լիտր բենզին; Խնելու ջրի վարձ սահմանել յուրաքանչյուր ընտանիքից տարեկան 5000 դրամ:
Աղբահեռացման աշխատանքների իրականացման դիմաց առկա բնակվող յուրաքանչյուր ընտանիքի համար՝ հաշվի առնելով բնակչության ծանր սոցիալական վիճակը սահմանել ամսեկան 200 դրամ վարձ: Լիճք համայնքում ջրամատակարարման և աղբահեռացման ոլորտների աշխատանքները իրականացնելու նպատակով գյուղապետարանի ենթակայության տակ գործող «Լիճքի կոմունալ տնտեսություն և բարեկարգում» ՀՈԱԿ-ին որպես սուբսիդյա հատկացնել 17400,0 հազար դրամ /հոդված 4511/ գումար: Աղբահանման աշխատանքները իրականացնելու նպատակով ավտոմեքենայի վարձակալության վճար սահմանել 720,0 հազար դրամ : Պահակներին սահմանված կարգի համաձայն վճարել նաև գիշերավարձ:
Ֆոնդային բյուջեի տարեսկզբի մնացորդը կազմում է 11249039/տասնմեկ միլիոն երկու հարյուր քառասունինը հազար երեսունինը/ դրամ:
Վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը՝ 13733326 /տասներեք միլիոն յոթ հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր քսանվեց/ դրամ փոխանցել Ֆոնդային բյուջե:
Ֆոնդային բյուջե վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացված 17300.0 հազար դրամ, գումարած 11249,0 հազար դրամ, գումարած 13733,3 հազար դրամ /ընդամենը 42282,3 հազար դրամ/ միջոցներով իրականացնել հետևյալ ծրագրերը՝

1.Նախագծահետազոտական աշխատանքների իրականացում	770.0 հազ. դրամ
2. 2 նոր գերեզմանոցներում տնակների կառուցում	2200.0հազ.դրամ
3. Համակարգչային տեխնիկայի գնում	600.0 հազ. դրամ
4. Գյուղապետարանի վարչական շենքի նորոգում	2400.0 հազ. դրամ
5. Խմելու ջրի ջրագծի կառուցում	3400,0 հազ. դրամ
6. Ոռոգման ջրի առուների կառուցում	11700.0 հազ. դրամ
7. Փողոցների Լուսավորության ցանցի կառուցում	1600.0 հազ. դրամ
8. Գրասենյակային կահույքի գնում	1200.0 հազ. դրամ
9. Գյուղամիջյան ճանապարհի կառուցում/ասֆալտապատում/	18412,3 հազ. դրամ
Ընդամենը	42282,3 հազ. դրամ

Ավագանու անդամներ՝

Բ. Սիմոնյան

Հ. Կրպեյան

Ս. Սարգսյան

Ս. Սիմոնյան

Ն. Աղաբեկյան

Ա. Հոխիկյան

ԼԻՃՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի ղեկավար՝ Լ. ԱՂԱԲԵԿՅԱՆ